

Մարկոսի ԺԶ. 9—20 հատածն իբր յաւելուած դրուած է: Ղուկայ ԻԲ. 43 համարի «որուն որուն» կը պակսի: Յովհաննու Ե. 4 համարին Հրեշտակին էջը յաւաղանն կը պակսի: Ընացեալ կնկան պատմութիւնը կայ եւ կը բռնէ ԳԼ. Ը. 2—11: Մատթէի ԻԳ. 14 համարի երկրորդ «վայ ո՛ր չկայ, ինչպէս կը պակսի Մարկոսի ԺԱ. 26 համարը: Գրեթէ ամէն էջի ստորորդնշանակուած են համաբարբառի մանր ցուցակներ: Արովհետեւ Չեռագրին մէջ շատ սիրուն նկարներ եւ խորաններ կան կը յիշատակենք անոնցմէ մի քանին եւ նկարագրութիւնը կու տանք: Ապա պիտի յաջորդեն յիշատակարանները:

Ա. Մարտիկոս. Աւետարանիս մէջ կան գոյնզգոյն, ոսկեխառն եւ ընդհանրապէս գեղեցիկ արուեստող, տեսարանի եւ դէմքի կենդանի արտայայտութեամբ նկարներ:

1. Էջ 30. Ս. Մատթէոս: 2. Էջ 33. Աղգարանական պատկեր: 3. Էջ 37. Յովսէփի տեսլան: 4. Էջ 41. Դարձ մոգուց: 5. Էջ 42. Հրեշտակ մը: 6. Էջ 44. Յիսուսի փախուստը յեգիպտոս: 7. Էջ 49. Մկրտութիւն: 8. Էջ 77. Փորձութենէն վերջ հրեշտակներու սպասաւորութիւնը Յիսուսի: 9. Էջ 77. «Բորոտ մի երկիր պագանէր»: 10. Էջ 80. Յիսուս կը բժշկէ Պետրոսի զոքանչը: 11. Էջ 80. զոքանչէն կը հիւրասիրուի: 12. Էջ 81. Յիսուս դեւեր կը հանէ: 13. Էջ 84. Յիսուս նաւին մէջ եւ խոզերու գահավիժումը: 14. Էջ 90. Յարութիւն իշխանին աղջկան: 15. Էջ 97. Դժուարութիւնը առաքելական պաշտօնին: 16. Էջ 133. Հերովդէս յընթրիս, գլխատումն Մկրտչին: 17. Էջ 135. Բազմամասն հացերու: 18. Էջ 137. Ընթանալն ի վերայ ծովուն: 19. Էջ 148. Քրիստոս քաւորէ աշակերտացն: 20. Էջ 168. Յիսուս մանուկները կ'օրհնէ: 21. Էջ 170. Մեծատունը: 22. Էջ 178. Ճամբուն վրայի երկու կոյրերը: 23. Էջ 182. Թղենին կ'անիծուի: 24. Էջ 209. Գալուստն Որդւոյ մարդոյ: 25. Էջ 214. Տասն կուսանք: 26. Էջ 220. Վերջն դատաստան: 27. Էջ 234. Յիսուսի մատնութիւնը: 28. Էջ 239. Հաւը կը խօսի, Պետրոս կուլայ: 29. Էջ 249. Խաչելութիւն Քրիստոսի: 30. Էջ 251. Թաղումն Քրիստոսի: 31. Էջ 254. Յովսէփ Պիղատոսէն Քրիստոսի մարմինը կը խնդրէ: 32. Էջ 257. «Եկաք տեսէք զտեղին»: 33. Էջ 258. Զօրականները կը կաշառուին: 34—45. Էջ 262—389. Մարկոս աւետարանիչ եւ պատկերներ անոր աւետարանէն: 46—60. Էջ 400—592. Ղուկաս եւ անոր աւետարանէն նկարներ: 61—67. Էջ 597—743. Յովհաննէս եւ անոր աւետարանէն նկարներ:

Խորան. Արուեստի գեղեցկութեան տեսակէտով հիանալի են տասներկու խորանները, որոնցմով կը զարդարուին 6, 7, 10, 11, 14, 15, 18, 19, 22, 23, 26, 27-րդ էջերը: Արժան կը համարիմ առանձին նկարագրել իւրաքանչիւրը. «Ամբողջ էջը գրաւուած է բովանդակ խորանով. վերնամասը կը կազմէ խորանին գլուխը, որ է զուգահեռաձեւ մը 9×3 սմ. մեծութեամբ, դրուած պատուանդանազարդ գերանի մը վրայ, որուն դուրս եղած ծայրերուն վրայ երկուստեք կը կանգնին երկու ուտաքանց ծառեր՝ կատարնուն վրայ մէյմէկ կարմրալանջ թռչուններ կեցած. վերեւք կան երկու սիրամարգեր, ոսկեզօծ խաչի մը բունին շուրջը պոչերնին իրար փաթթած, ամփոփուած պոչերնին տարածելով երկայնութեամբ զուգահեռաձեւին, որուն երկու անկիւնածայրերուն վրայ շեղակի կը բարձրանան մէյմէկ ծաղիկփունջեր: Զուգահեռաձեւին միջուկը կը բաժնուի երեք մասերու. դէպի ներս կարգով՝ Ա. մասին մէջ դէմ առ դէմ կը կենան մարդկային կերպարանքով՝ կուրծքով եւ ձեռքով երկու թռչուններ, ծաղկոլորքներու մէջ՝ տերեւալից եղջերափողեր բռնած եւ ծաղկալից գլխիվայր նոյնպիսի եղջերափողներու վրայ կանգուն: Բ. մասին մէջ, որ յատուկէն թերատուած շրջանակ մ'է՝ ատամնաձեւ եղջերազարդով, երկգլուխ կարմիր գոյնով արծիւի մը, երկու կողմերը կան երեքական արագիւններ, որոնք իրարու պոչը կը կացահարեն: Գ. մասին մէջ, որ նոյնպիսի շրջանակ մ'է, նոյնպիսի ատամնազարդով մը եզերուած, կ'երեւի գագաթը գերծուած՝ կարմրեւս սպիտակահանդերձ ծերունի մը, որուն կարմրագիծ լուսապսակին երկու կողմը կը կարգացուի «Եւսեբի», երկու ձեռքերովը բռնած է մագաղթի գալարաթերթ մը, որուն վրայ նոյնպէս կը կարգացուի. «Եւսեբա Կարպիանոսի եղբար», — Զուգահեռաձեւին յատակի գերանազարդը կը հանգչի երկու սիւներու վրայ, որոնք նոյնպէս կը կանգնին յատակի տերեւազարդ գերանի մը վրայ, որուն դուրս ելած երկու ծայրերուն վերայ կան նոյնպէս երկու բտաքանց ծառեր, ծաղկազեղ կատարնուն վրայ թեւաբաց մէյմէկ կարմիր արծիւներով: Աս սիւններուն ալ գլուխներուն վրայ իբրեւ խոյակազարդ նկարուած են երկու զոյգ վիշապաթեւ առիւծներ: Հայկոս նայուածքով դէմքնին իրարու դարձացած: Սիւներն անջրպետող միջոցին մէջ միջին մետրոպեան մանրատառ նշանագիրներով կը կարգացուի հետեւեալը.

եւս, փոխանակ չորսի, երեքական սիւնակներով՝ երկու կանոն-տախտակներ կան:

Ե. Խորանակաւ կը գրաւէ 14րդ էջն ամբողջովին: Գլխամասն է՝ բազմապատրոյզ զարդարանքով նախաւորուած հորիզոնադիր գետնի մը վրայ հաստատուած զուգահեռաձեւ մը, երեք կողմերը խաչանախշուն շրջերկրով, եւ վերի երկու անկիւնածոցերը՝ ոսկի յատակի վրայ շուշանաձեւ զարդարանքով: Միջուկին երեք համակենդան կիսաշրջանակներէն առաջինին մէջ, կարմիր յատակի վրայ նկարուած են եօթն խաչազարդեր, երկրորդին մէջ կ'երեւին երկուստեք երկու թաղարներէ ելող ծաղկածառեր՝ ոսկի յատակի վրայ, իսկ երրորդին մէջ, նոյնպէս ոսկի յատակի վրայ նկարուած է առոյգ ծերունիի մը դէմքը, որուն ծոծրակին կողմը կը կարդացուի Եսայի: Իսկ ձեռքի սպիտակ տախտակին վրայ՝ «Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի եւ կո»:

Գլխամասի վերեւը կը տեսնուի ոսկեծոյլ ջրաման մը, որուն շրթունքին վրայ ջուր կ'ըմպէ խայտաճաւեր, նոյնպէս երկու կողմերը երկերկու խայտաճաւեր, որոնք դէպի ջրամանը կը վազեն. աջկողմը, թռչնագլուխ եւ սատանայազգեստ մարդու մը բռնած ոստին վրայ կը կանգնի խոշոր թռչուն մը, իսկ ձախակողմը՝ պանանենի լայնատերեւ զարդաձեւի մը ծայրը՝ լայնակտուց մոխրագոյն թռչուն մը:

Ստորնամասը կազմուած է պորփիւրանման կանաչ բուներ, արծուակերտ խոյակներ եւ վէտովէտուն կապոյտ խարիսխներ ունեցող երեք սիւներէ, որոնց երկու անջրպետներուն մէջ կան եռասիւնակ երկու կանոն-տախտակներ. իսկ երկու կողմերը, երկու արմաւիղներու վրայ մէյմէկ բուեր:

Զ. Խորանակաւ (էջ 15) ընդհանուր առմամբ նման է նախորդին, միայն՝ գլխամասի զուգահեռաձեւը տարբեր ոճով պերճ զարդարանք մ'է, ոսկի յատակի վրայ, եւ միջուկի կենդրոնական բոլորին մէջ ունենալով տխրադէմ երիտասարդի մը պատկերը, որուն ծոծրակի կողմը կը կարդացուի «Երեմիա», իսկ ձեռքի տախտակին վրայ՝ «Չայն գութեաց ի Հռոմայ ող»:

Գլխամասին վերեւի կողմը, չորս չորս խայտաճաւեր ջուր կ'ըմպեն առիւծաբերան շատրուանէ մէջէն: Նոյնպէս, ստորնամասի երկու կողմի երկու արմաւիղներուն վրայ, փոխանակ բուերուն, կեցած են երկու արծիւներ:

Է. Խորանակաւ (18 էջ) նախորդիններէն տարբեր ոճ մը կը պարզէ: Գլխամասի զուգահե-

ռաձեւը ամբողջովին ոսկի յատակի վրայ բռնուած զարդարանք մ'է, բաւական գեղեցիկ, առուոյտազարդ շրջերկրով: Միջուկին կենդրոնը կը գտնուի լուսնադէմ կերպարանք մը շառագոյն, ժանեկաւոր շրջագծի մը մէջ պարուրուած. սոյն կենդրոնէն դէպի երկու կողմերը եւ դէպի վեր կ'արձակուին մթագոյն հինգ շառաւիղներ, գոյնզգոյն եւ ծալիծալ ժապաւէնէ մը բոլորակաբար միջանցուած: Շառաւիղներու եւ ժապաւէնի այս միջանցումներով գոյացած մեծ ու փոքր ութ բազմաձեւ խորշամասերէն չորս վերինները լեցուած են ծաղկազարդերով (երկուքին մէջ կենալով նաեւ մէյմէկ խայտաճաւեր). իսկ չորս ստորիններուն մէջ կան մէյմէկ փոքր թռչուններ: — Գլխամասի վերեւի կողմին վրայ կայ կարմրամէջ ջրաման մը, որուն մէջ դրուած է ոսկեզօծ սրուակ մը՝ ծայրը վարդերով. ջրամանին երկու կողմը կան երկու զմայլելի կենդանութեամբ նկատուած աքաղաղներ, իրարու հետ կռուելու պատրաստութեան մէջ. իսկ զուգահեռաձեւ երկու կողմերը կան մէյմէկ ծաղկածառեր, վրանին մէյմէկ թռչուններով:

Ստորնամասը կը բաղկանայ երեք սիւներէ, որոնց բուններն են գորշագոյն պորփիւրանման, խոյակները մարդագլուխ-առիւծակերտ ու խարիսխները կապուտագոյն. երկու անջրպետներուն մէջ քառասիւնակ երկու կանոն-տախտակներով. երկու կողմերը մէյմէկ սիրուն նունենիներով, որոնց վրայ կեցած են մէյմէկ եգ սիրամարգեր:

Ը. Խորանակաւ (18րդ էջ) համանման է նախորդին, քիչ տարբերութեամբ, այսպէս ստորնամասի երկու անջրպետներուն մէջ կան կրկնասիւնակ երկու-տախտակներ: Իսկ գլխամասի երկու վերին մեծ խորշամասերուն մէջ, փոխանակ խայտաճաւերուն, կան երկու կարմրափայլ դէմքեր, որոնց գլխու եւ մօրուաց մազերը ժանեկաձեւ շրջագծի յօրինուածքն առած են: Իսկ ստորնամասի երկու կողմերուն նունենիներուն վրայ կեցած են մէյմէկ արու սիրամարգներ:

Թ. Խորանակաւ կը գրաւէ 22րդ էջն ամբողջովին. գլխամասն է զուգահեռաձեւ մը, որ ունի հետեւեալ մասերը. նուազ կարմրագոյն կէս-խաչանկար շրջերկր մը. ոսկի յատակի վրայ՝ կարմիր-կապոյտ եւ թուխ կիտուածանկար զարդարանք մը, մէկ սանդիմ լայնքով լեղակագոյն եւ խիտ կիտուածանկար կիսաշրջանակ մը, որուն ծոցը կայ նոյնպիսի գորշ կիսաշրջանակ մը. իսկ վերջնոյս ծոցը՝ ոսկեզօծ յատակի վրայ նկարուած է մօտիկ դէմք մը, ձեռքի մագաղաթին վրայ նշանակուած ըլլալով անընթեռնի

Սոյն արարեքէն դատաւիճիւք, 1910ին կարգաւ եւ թարգմանել տուի Սեբաստիոյ Փրանսական հիւպատոսին, որ Սիւրիացի արաբ քրիստոնեայ մ'էր)։

Էջ 9. (Վերջին ժամանակոյդ) ԲՆԻՐԵՐԻՆԷ) «Վերջին ստացողը սուրբ աւետարանիս յիշեալն էր սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՊատուականն որ ազատեաց զսուրբ աւետարանս ի ձեռաց այլազգեաց, եւ եղ յիշատակ Պատուականն իւր հոգւոյն, եւ իւր հաւերն խումարին, եւ իւր մաւրն Անդրին, եւ իւր կնոջն Ղամարին, եւ իւր հաւերն Յոհաննին, եւ մաւրն Ճանփաշին։ Եւ քեռուն Մկրտչին, վախճալ եւ յիշատակ եւ յիշատակ իւրեանց հոգւոյն, Պատուականին, եղբարն Իսկանտարին, Աբրահամին եւ Խաչատուրին, որ փոխեցաւ առ Քրիստոս տղայ հասակաւ, Աստուած ողորմի իւրեանց հոգւոյն ամէն։ Դարձեալ յիշեալն էր յաղաւթս ձեր զխորքն, զկիւնն զկուրծիստանն եւ զիւրեանց զաւակն զՍաֆարն, զՆաղաշն եւ զՔնքոյն, զԱրդանէսն, զԿեռասն, զԿողիկն, զԼամարին, եղբայրն զխաչատուրն։ Այս եղեւ ի քաղաքս Սեբաստիոյ, ի թուականիս Հայոց ի ՌԾԱ։ Ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն։ Հայր մեր որ, ջայս սուրբ աւետարանս եղ յիշատակ Պատուականն ի ձեռն Տէր Տիրատուրին, խնամ տանողն աւրհնին յԱստուծոյ, ամէն։ Ես Միքայէլ երեցս Գրեցի զյիշատակարանս, միով տէր ողորմայիւ յիշեցէք յաղաւթս ձեր զնշեցեալսն իմ, ամէն։ Դարձեալ յիշեալն էր յաղաւթս ձեր զՊատուականին դեռաբոյս որդիքն զՄկրտչին զՍիւնէսն, եւ որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։ Եւ զմայրն Մանանայն։ Այլ եւ յիշեալն էր յաղաւթս ձեր զՊատուականին որդին զՂուսինն, եւ զփեսայքն զՊետրոսն եւ զԱլեքսանտոսն, եւ զհարսն զԳոհարն եւ զԹոռնեան զԹամամն, զՏիրուհին եւ զԱրուծիւնն, զոր Տէր Աստուած խաղաղութեամբ պահեցէ ամէն, եւ որք յիշէք յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն։ Հայր մեր որ յեր»։

Էջ 29 (Վերջին ժամանակոյդ) ԲՆԻՐԵՐԻՆԷ)։ Այս թանկագին, պատկերազարդ, մագաղաթեայ, երկաթագիր սուրբ Աւետարանս ո՞րք վաճառեցէ, զորացն եւ ի Ս. Աթոռէս հանցէ, անիծեալ, նզովեալ եւ բանադրեալ եղիցի տոհմիւքն եւ պարագայիւքն։

3 յունուար 1881
ի վանս Ս. Նշանաց
Սեբաստիոյ

Առաջնորդ Սեբաստիոյ
Պետրոս
Եպս. Սեբաստիոյ
1879

Էջ 29 (Վերջին ժամանակոյդ) ԲՆԻՐԵՐԻՆԷ)։ Սոյն թանկագին, պատկերազարդ, մագաղաթեայ եւ երկաթագիր Ս. Աւետարանս սեպհականութիւնն է Ս. Աստուածածին եկեղեցւոյ Սեբաստիոյ քաղաքին։

20 ապրիլ 1904
Ս. Նշան վանք
Սեբաստիոյ

Առաջնորդ Սեբաստիոյ
Պետրոս
Եպս. Սեբաստիոյ
1879

Էջ 260 (Վերջին ժամանակոյդ) ԲՆԻՐԵՐԻՆԷ)։ Ընդ մետանսիցն գնդի համադասեալ Քրիստոս զՏէր Կոստանդին կաթողիկոս եւ զեղբարորդին իւր Թորոս քահանայ ստացող աստուածախաւս այս մատենի ամէն։

Էջ 399 (Վերջին ժամանակոյդ)։ Ստացողն սորա Թորոսի քահանայի ողորմեա Քրիստոս։

Էջ 593 (Վերջին ժամանակոյդ)։ ՋԱՍՏՈՒԼԱԾԱԿԱՄԻԼ Տէր Կոստանդին կաթողիկոս Հայոց եւ զեղբարորդին իւր Թորոս քահանայ որ եւ ստացող լուսազարդիս յիշեալն էր ի Քրիստոս Յիսուս։

Էջ 397 (Վերջին ժամանակոյդ)։ ՋՆԵՐՍԷՍ քահանայ Ստեփաննոս երեցն յիշեցէք յաղաւթս ձեր ով եղբարք աղաչեմ։

Էջ 722 (Վերջին ժամանակոյդ)։ Փառք քեզ... Ընորհիւ Տեառն սկսեալ եւ ողորմութեամբ նորին յանգ ելեալ աւարտեցաւ մատենան աստուածախաւս, աստուածունակ, երկրպագելի եւ պաշտելի սուրբ աւետարանս յեթնհարիւր եւ մետասաներորդի ամի թուաբերութեանս Հայոց, յաշխարհամուտ յաթուս Հռովմիլա, ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարացս, որ յանուն սուրբ Փրկչին, սրբոյ Աստուածածնին եւ սուրբ Լուսաւորչին մերոյ, եւ այլոց եւս բազմահաւաք սրբոց։ Ի ժամանակս աստուածասէր եւ բարեպաշտ արքային մերոյ Հեթումի եւ ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ կաթողիկոսի, որ սրբազան վարիւք իւրովք առհասարակ զարմացուցանէր զբազում մինչ զի եւ յարաքնոցն առաւել ընդունէր վկայութիւն զանհամեմատ վարուցն իւրոց մաքրութեան։ Հեզ էր եւ ողորմած եւ բազում բարութեանց լինէր օրինակ, ուստի եւ եղբարորդին իւր Թորոս քահանայ ի նմանէ ուսեալ լինէր գրասէր եւ աստուածասէր, զմաւ ածեալ թէ ամենայն որ ինչ յերկրէ ընծայեալ նիւթք ընդ սոյն կորնչել ունին, եւ որ յաւիտեան մնայ բան Տեառն է. վասն այսորիկ եւսափափաք սիրով ստանայր մատենան աստուածաշունչս ի հին եւ ի նոր կտակարանաց։ Եւ զամենայն գոյս իւր եւ զարարս, գողջիւր եթէ ջանայր դնել ի վերա նոցա եւ այլ եւս զարդուց սրբոյ եկեղեցւոյ, վասն զի յոյժ տաւնասէր էր այրն այն եւ պայծառացուցիչ եկեղեցական կարգաց, նմին իրի ստանայր կրկին անգամ զմատենան սրբոյ աւետարանիս յիմմէ անարժանութենէ Թորոսէ մականունն Ռաւսլին կոչեցելոյ եւ որ ըստ կարի իմում յանգ հանի Աստուծով զհրաման նորա։ Նոյնպէս զարդարեալ ոսկով սրբով եւ երանգերանգ գունովք ներքոյ եւ արտաքոյ ընդերուզեալ քարամբք պատուականաւաք, առ ի սիրելի առնել զսա մանգանց եկեղեցւոյ։ Վասն որոյ աղաչեմ զձեզ ով աստուածասէրք որք հանդիպիք սմա եւ որք ժառանգէք զսա, յիշել աղթիւք ի Տէր զարժանաւորսն ամենայն բարեաց յիշատակի զբարեպաշտ արքայն Հեթում եւ զորբահոգի Թագուհին իւր Ջապել գոլասոր Լեւոնի արքային, եւ աստուածով զորդիս սոցա զպարոն Լեւոն եւ զպարոն Թորոս եւ ամենայն նախնիս իւրեանց, որք եւ անուանին Ռուբինեանք։ Յիշել աղաչեմ եւ զԹագաւորահայրն պարոն Կոստանդին, ուստեաւաք եւ դատեաւաք եւ ամենայն զարմիւք։ Յիշեալն էր զերջանիկ հայրապետն Հայոց Տէր

